



UNHCR

United Nations High Commissioner for Refugees
Haut Commissariat des Nations Unies pour les réfugiés

Ոչ պաշտոնական թարգմանություն

ՄԱԿ ՓԳՀ-ի դիտարկումները «Փախստականների և ապաստանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում և Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում պատժի չենթարկելու սկզբունքի հետ կապված փոփոխություններ կատարելու մասին օրենքների նախագծերի վերաբերյալ

Ներածություն

Հայաստանի Հանրապետությունում Միավորված ազգերի կազմակերպության փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի (ՄԱԿ ՓԳՀ) ներկայացուցչությունը երախտապարտ է նախատեսվող փոփոխությունների մասին տեղեկացվելու համար և գնահատում է իր դիտարկումները ներկայացնելու ու այս հարցի շուրջ համապատասխան մարմինների հետ լրացուցիչ քննարկումների հնարավորությունը: Այս կապակցությամբ ՄԱԿ ՓԳՀ-ն պատրաստ է շարունակելու սերտ համագործակցությունը բոլոր համապատասխան մարմինների, մասնավերապես՝ Հայաստանի Հանրապետության կառավարության և Ազգային ժողովի (խորհրդարանի) հետ ապաստանին առնչվող ազգային օրենսդրության մշակման ուղղությամբ:

ՄԱԿ ՓԳՀ-ն առաջարկում է այս դիտարկումները որպես Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր ասամբլեայի կողմից փախստականներին և իր մանդատի ներքո գտնվող այլ անձանց միջազգային պաշտպանություն տրամադրելու և փախստականների խնդրի հարատև լուծումներ գտնելու հարցում կառավարություններին աջակցելու լիազորությամբ օժտված գործակալություն: Ինչպես սահմանված է իր Կանոնադրության մեջ, ՄԱԿ ՓԳՀ-ն ապահովում է իր գրասենյակի իրավասության ներքո գտնվող փախստականների պաշտպանությունը, այդ թվում, *«փախստականների պաշտպանությանն առնչվող միջազգային կոնվենցիաների կնքմանը եւ վավերացմանը նպաստելով, դրանց իրականացումը վերահսկելով և դրանցում փոփոխություններ կատարելու առաջարկներ ներկայացնելով»*¹: ՄԱԿ ՓԳՀ-ի իր Կանոնադրությամբ սահմանված վերահսկողական լիազորությունը վերահաստատված է Փախստականների կարգավիճակի մասին 1951 թվականի կոնվենցիայի (այսուհետ՝ 1951թ. Կոնվենցիա) 35-րդ հոդվածում, համաձայն որի՝ *պայմանավորվող պետությունները պարտավորվում են «համագործակցել Միավորված ազգերի կազմակերպության փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի գրասենյակի [...] հետ համապատասխան գործառույթների իրականացման գործում, և, մասնավորապես, հեշտացնում են սույն Կոնվենցիայի դրույթների կիրառումը վերահսկելու նրա*

¹ Տես Փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի գրասենյակի Կանոնադրության 8-րդ մասի (ա) կետը, որը վերանայվել է Գլխավոր ասամբլեայի կողմից 58/153 բանաձևով, 24 փետրվարի 2004թ.: Այն հասանելի է հետևյալ հղմամբ՝ <https://bit.ly/2p47kBm>:

պարտականությունը»² Նմանատիպ դրույթ ներառված է Փախստականների կարգավիճակի մասին 1967 թվականի արձանագրության II հոդվածում³:

Այսպիսով՝ ՄԱԿ ՓԳՀ-ի դիտարկումները և այս օրենսդրական գործընթացի համատեքստում հետագա խորհրդակցությունների համար հասանելիությունը հիմնված են այս միջազգային փաստաթղթերի վրա: Ավելին, Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (այսուհետ՝ Սահմանադրություն) 81-րդ հոդվածի 1-ին մասի դրույթները պահանջում են հիմնական իրավունքների և ազատությունների վերաբերյալ Սահմանադրությունում ամրագրված դրույթները մեկնաբանելիս հաշվի առնել Հայաստանի Հանրապետության վավերացրած՝ մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային պայմանագրերի հիման վրա գործող մարմինների պրակտիկան: Ինչպես ներկայացվել է վերը, ՄԱԿ ՓԳՀ-ն ունի Սահմանադրության 81-րդ հոդվածի 1-ին մասում նշված իրավական կարգավիճակին շատ նման կարգավիճակ և, որպես այդպիսին, ակնկալում է արժանանալ համանման մոտեցման⁴:

Ընդհանուր նկատառումներ

ՄԱԿ ՓԳՀ-ն բարձր է գնահատում Հայաստանի Հանրապետության կառավարության և խորհրդարանի՝ ապաստանի ազգային համակարգի ամրապնդմանն ուղղված շարունակական ջանքերը և ցանկանում է ընդգծել առաջարկվող փոփոխությունների կարևորությունը ազգային օրենսդրության ամրապնդման և պատժի չենթարկելու սկզբունքի՝ 1951 թվականի Կոնվենցիայի 31-րդ հոդվածի համաձայն մեկնաբանությունն ու կիրառությունը ապահովելու հարցում⁵: ՄԱԿ ՓԳՀ-ն ուրախությամբ նշում է, որ 2016 թվականին պատժի չենթարկելու դրույթի մեկնաբանության և կիրառության առնչությամբ իր արած մեկնաբանությունները հաշվի են առնվել այս նախագծերը պատրաստելու ընթացքում⁶: ՄԱԿ ՓԳՀ-ն ակնկալում է, որ առաջարկվող օրենսդրական

² ՄԱԿ Գլխավոր ասամբլեա, *Փախստականների կարգավիճակի մասին կոնվենցիա*, 28 հուլիսի 1951թ., Միավորված ազգերի կազմակերպություն, Միջազգային պայմանագրերի շարք, հատոր 189, էջ 137, որը հասանելի է հետևյալ հղմամբ՝ <https://www.refworld.org/docid/3be01b964.html>:

³ ՄԱԿ Գլխավոր ասամբլեա, *Փախստականների կարգավիճակի մասին արձանագրություն*, 31 հունվարի 1967թ., Միավորված ազգերի կազմակերպություն, Միջազգային պայմանագրերի շարք, հատոր 606, էջ 267, որը հասանելի է հետևյալ հղմամբ՝ <https://www.refworld.org/docid/3ae6b3ae4.html>:

⁴ Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն, Հոդված 81. Հիմնական իրավունքներն ու ազատությունները և միջազգային իրավական պրակտիկան.

«1. Հիմնական իրավունքների և ազատությունների վերաբերյալ Սահմանադրությունում ամրագրված դրույթները մեկնաբանելիս հաշվի է առնվում Հայաստանի Հանրապետության վավերացրած՝ մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային պայմանագրերի հիման վրա գործող մարմինների պրակտիկան»: Հասանելի է հետևյալ հղմամբ՝ <https://www.president.am/en/constitution-2015/>:

⁵ Տես վերոնշյալ Ծանոթագրություն 2-ը, 1951 թվականի Կոնվենցիայի 31-րդ հոդվածի 1-ին պարբերությունը սահմանում է.

«Պայմանավորվող պետությունները պատժամիջոցներ չեն կիրառում այն փախստականների ապօրինի մուտքի կամ ներկայության կապակցությամբ, ովքեր ուղղակիորեն գալով այն տարածքից, որտեղ նրանց կյանքը կամ ազատությունը վտանգվում էր 1-ին հոդվածի իմաստով, մուտք են գործում իրենց տարածք կամ գտնվում են այնտեղ առանց թույլատրության, պայմանով, որ նրանք անձամբ, առանց ձգձգման, ներկայանան իշխանություններին և մատնանշեն իրենց ապօրինի մուտքի կամ գտնվելու հիմնավոր պատճառ»:

⁶ ՄԱԿ Փախստականների հարցերով զերագույն հանձնակատար (ՄԱԿ ՓԳՀ), *ՄԱԿ ՓԳՀ-ի մեկնաբանությունները Հայաստանի Հանրապետության նոր Քրեական օրենսգրքի նախագծի վերաբերյալ առանձնահատուկ ուշադրություն դարձնելով ներկա Քրեական օրենսգրքի 329-րդ հոդվածի 3-րդ մասի ձևակերպմանը*, 2016թ. հուլիս, որը հասանելի է հետևյալ հղմամբ՝ <https://www.refworld.org/docid/5a69a3304.html>:

փոփոխությունները արդյունավետ կերպով կլուծեն պատժի չենթարկելու սկզբունքին առնչվող մեկնաբանության հետ կապված խնդիրները, կկատարելագործեն ներկա պրակտիկան⁷ և ի վերջո կբարելավեն պաշտպանական միջավայրը Հայաստանի Հանրապետությունում ապաստան հայցողների և փախստականների համար:

Կոնկրետ դիտարկումներ

1. «Փախստականների և ապաստանի մասին» օրենքի 28-րդ հոդվածի 1-ին մասում առաջարկվող փոփոխությունները

«Փախստականների և ապաստանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի («Փախստականների և ապաստանի մասին» օրենք) 28-րդ հոդվածի 1-ին մասի՝ «*ապօրինի մուտքի*» վերաբերյալ գործող դրույթը սահմանում է.

«Ապաստան հայցողները և փախստականները Հայաստանի Հանրապետություն ապօրինի մուտք գործելու կամ գտնվելու համար չեն ենթարկվում քրեական կամ վարչական պատասխանատվության»:

Այս դրույթը ավելի լայն է, քան 1951 թվականի Կոնվենցիայի 31-րդ հոդվածը, քանի որ այն, առանց լրացուցիչ պայմանների, Հայաստանի Հանրապետություն անկանոն մուտք գործելու կամ ներկայության համար պատժից ազատում է բոլոր ապաստան հայցողներին և փախստականներին, որոնք ապաստանի դիմում են ներկայացրել, կամ ուն շնորհվել է միջազգային պաշտպանություն:

«Փախստականների և ապաստանի մասին» օրենքի 28-րդ հոդվածի 1-ին մասում առաջարկվող փոփոխությունը ներառում է 1951 թվականի Կոնվենցիայի 31-րդ հոդվածի 1-ին պարբերությունում նշված որակող տարրերը հետևյալ կերպ.

«Հայաստանի Հանրապետություն ապօրինի մուտք գործելու կամ ներկայության համար քրեական կամ վարչական պատասխանատվություն չի կիրառվում փախստականների, ինչպես նաև ապաստան հայցողների նկատմամբ, որոնք, ուղղակիորեն գալով մի տարածքից, որտեղ նրանց կյանքը կամ ազատությունը վտանգված է եղել սույն օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի իմաստով, մուտք են գործում կամ գտնվում են Հայաստանի Հանրապետության տարածքում առանց թույլտվության, պայմանով որ նրանք առանց ձգձգման ներկայանան Հայաստանի Հանրապետության իշխանություններին և մատնանշեն ապօրինի մուտքի կամ ներկայության հիմնավոր պատճառ»:

⁷ Տես ՄԱԿ Խոշտանգումների դեմ հանձնաժողով, *Եզրափակիչ դիտարկումներ Հայաստանի չորրորդ պարբերական զեկույցի վերաբերյալ, 26 հունվարի 2017թ.*, CAT/C/ARM/CO/4, 27 հունվարի 2017թ., պարբ. 41. «Նշելով հանդերձ, որ փոփոխությունները ապօրինի սահմանահատման համար (քրեական օրենսգրքի 329-րդ հոդվածի 3-րդ մաս) պատասխանատվության չենթարկելու մասին դրույթի կիրառումը տարածում են ապաստան հայցող բոլոր անձանց և ոչ միայն նրանց վրա, ովքեր դիտարկվում են «քաղաքական ապաստանի» համար, Հանձնաժողովը մտահոգված է հաղորդումներով այն մասին, որ այս դրույթը ոչ միշտ է կիրառվում պրակտիկայում, և որ որոշ ապաստան հայցողներ դեռևս կալանավորվում են ապօրինի սահմանահատման համար»: Հասանելի է հետևյալ հղմամբ՝ <https://bit.ly/36w482i>: Տես նաև ԱՄՆ Պետդեպարտամենտ, 2017 թ. Երկրների զեկույցները մարդու իրավունքների պրակտիկաների մասին – Հայաստան, 20 ապրիլի 2018թ., որը հասանելի է հետևյալ հղմամբ՝ <https://bit.ly/36JYedX>:

ՄԱԿ ՓԳՀ-ն ողջունելի է համարում այն, որ պահպանվում և ուղղակիորեն հիշատակվում է, որ պատժի չենթարկելը կիրառվելու է ոչ միայն փախստականների, այլև ապաստան հայցողների նկատմամբ: Հաշվի առնելով 1951 թվականի Կոնվենցիայի առարկան ու նպատակը, ինչպես նաև մեծ տարածում ունեցող պետական պրակտիկան և առաջատար իրավաբանների կարծիքները՝ ՄԱԿ ՓԳՀ-ն կայուն դիրքորոշում ունի այն մասին, որ պատժի չենթարկելու սկզբունքը կիրառվում է ապաստան հայցողների և ճանաչված փախստականների նկատմամբ: «Որպեսզի 31-րդ հոդվածի 1-ին մասը ուժ ունենա, այն պետք է կիրառվի ցանկացած անձի նկատմամբ, ով ունի կամ հայտնում է, որ ունի միջազգային պաշտպանության կարիք, և այն պետք է դադարի կիրառվել միայն այն ժամանակ, երբ որոշում կայացնողը արդար ընթացակարգի արդյունքում հակառակի մասին վերջնական որոշում կրնառնի»⁸: Հակառակ դեպքում, 31-րդ հոդվածով նախատեսված սկզբունքը անիմաստ կդառնար¹⁰:

ՄԱԿ ՓԳՀ-ն ցանկանում է վերահաստատել, որ 31-րդ հոդվածի 1-ին մասը պաշտպանում է ապաստան հայցողներին և փախստականներին ապօրինի մուտքով կամ ներկայությամբ պայմանավորված «պատժամիջոցների» կիրառումից և պարունակում է երեք որակող պայմաններ, որոնք պետք է բավարարվեն: Դրանք կարելի է ամփոփել որպես «ուղղակիություն», «անհապաղություն» և «հիմնավոր պատճառ» («ուղղակիորեն գալով», «առանց ձգձգման», «հիմնավոր պատճառ»)՝¹¹: Պատժի չենթարկելու սկզբունքի որակող պայմանները ներմուծելով՝ կարևոր է այնպես անել, որ դրանք մեկնաբանվեն և կիրառվեն 1951 թվականի Կոնվենցիայի առարկայի և նպատակի լույսի ներքո¹²:

⁸ Տես Գայ Գուդվին-Գիլ, *Փախստականների կարգավիճակի մասին 1951 թվականի կոնվենցիայի 31-րդ հոդված. Չպատժելիություն, կալանք և պաշտպանություն*, 2003թ. հունիս [Guy Goodwin-Gill], հասանելի է հետևյալ հղմամբ՝ <https://www.refworld.org/docid/470a33b10.html>; տես նաև Erika Feller, Volker Türk and Frances Nicholson (eds.), *Refugee Protection in International Law: UNHCR'S Global Consultations on International Protection* (Cambridge University Press, 2003), 185, at 219, para. 7; James C. Hathaway, *The Rights of Refugees under International Law* (Cambridge University Press, 2005), at p. 389; Gregor Noll, 'Article 31', in Andreas Zimmerman (eds.), *The 1951 Convention relating to the Status of Refugees and its 1967 Protocol* (Oxford University Press, 2011), at p. 1253:

⁹ ՄԱԿ ՓԳՀ, *Ամփոփ եզրակացություններ ապօրինի մուտքի կամ ներկայության համար չպատժելիության մասին. 1951 թվականի Կոնվենցիայի 31-րդ հոդվածի մեկնաբանությունն ու կիրառությունը*, 15 մարտի 2017թ., Կլոբ սեղան, պարբ. 7, («ՄԱԿ ՓԳՀ 2017թ. ամփոփ եզրակացություններ») <http://www.refworld.org/docid/5b18f6740.html>: Տես նաև ՄԱԿ ՓԳՀ, *Ամփոփ եզրակացություններ Փախստականների կարգավիճակի մասին 1951 թվականի կոնվենցիայի 31-րդ հոդվածի մասին*, 9 նոյեմբերի 2001թ., պարբ. 10(ե), («ՄԱԿ ՓԳՀ 2001թ. ամփոփ եզրակացություններ») <http://www.refworld.org/docid/470a33b20.html>, և Քեթրին Կոստելլո (Յուլյա Յոֆֆի, Թերեզա Բյուքսել), *Փախստականների կարգավիճակի մասին 1951 թվականի կոնվենցիայի 31-րդ հոդված*, 2017թ. հուլիս, PPLA/2017/01, էջ 15, <http://www.refworld.org/docid/59ad55c24.html>:

¹⁰ ՄԱԿ ՓԳՀ *հրապարակային հայտարարությունը Եվրոպական միության դատարանում Սիմադը և Ներզաղթյալների աջակցության և տեղեկատվության խումբն (GISTI) ընդդեմ Ներքին գործերի նախարարության գործով*, 1 օգոստոսի 2011թ., C-179/11, պարբ. 2.2, <http://www.refworld.org/docid/4e37b5902.html>:

¹¹ ՄԱԿ փախստականների հարցերով զերագույն հանձնակատար (ՄԱԿ ՓԳՀ), *Փախստականների կարգավիճակի մասին 1951 թվականի կոնվենցիայի 31-րդ հոդված*, 2017թ. հուլիս, PPLA/2017/01, տես էջ 10, որը հասանելի է հետևյալ հղմամբ՝ <https://www.refworld.org/docid/59ad55c24.html>; Guy Goodwin-Gill, տես վերը՝ 8-րդ ծանոթագրությունը, էջ 188:

¹² *Միջազգային պայմանագրերի իրավունքի մասին Վիեննայի կոնվենցիան* հաստատում է ընդհանուր միջազգային իրավունքի սկզբունքը, համաձայն որի՝ միջազգային պայմանագիրը «պետք է բարեխղճորեն մեկնաբանվի պայմանագրի հասկացությունների՝ դրանց համատեքստում ունեցած սովորական նշանակությանը համապատասխան, ինչպես նաև պայմանագրի առարկայի և նպատակի

Ուղղակիություն - ուղղակիորեն գալով մի տարածքից, որտեղ նրանց կյանքը կամ ազատությունը վտանգված է եղել. այս տարրը ներառում է այն փախստականներին, ովքեր բառացիորեն անմիջապես նմանատիպ տարածքից են գալիս, սակայն կարող է ներառել նաև նրանց, ովքեր զուտ տարանցել են միջանկյալ երկրով կամ երկրներով կամ մնացել են այնտեղ¹³: Հետևաբար «ուղղակիորեն» տերմինը չպետք է մեկնաբանվի բառացի՝ ժամանակային կամ աշխարհագրական իմաստով, քանի որ պարտադիր չէ, որ փախստականները եկած լինեն առանց այլ երկրներով անցնելու, այնտեղ կանգ առնելու կամ մնալու, այն բանից հետո, երբ լքում են տարածքը, որտեղ նրանց կյանքը կամ ազատությունը վտանգված է եղել¹⁴: Չնայած միջանկյալ երկրում

լուսի ներքո»: 31-րդ հոդվածի 1-ին մաս, *Միջազգային պայմանագրերի իրավունքի մասին Վիեննայի կոնվենցիա* (ՄՊԻՎԿ), 23 մայիսի 1969թ., Միավորված ազգերի կազմակերպություն, Միջազգային պայմանագրերի շարք, հատոր 1155, <http://www.refworld.org/docid/3ae6b3a10.html>, էջ 12: Դա նշանակում է մեկնաբանել 1951 թվականի Գոնվենցիան՝ հղում կատարելով փախստականներին միջազգային հանրության պաշտպանությունը տրամադրելու նպատակին և առարկային, և ապահովելով «փախստականների համար այդ հիմնարար իրավունքների և ազատությունների հնարավորինս լայն իրականացում»: (Փախստականների կարգավիճակի մասին 1951 թվականի կոնվենցիայի նախաբան): Տես նաև Guy Goodwin-Gill, տես վերը՝ 8-րդ ծանոթագրություն, էջ 188-189:

¹³ ՄԱԿ ՓԳՀ Վերանայված ուղեցույց ապաստան հայցողների կալանքին առնչվող կիրառելի չափանիշների և չափորոշիչների վերաբերյալ, 26 փետրվարի 1999թ., պարբ. 4, <http://www.refworld.org/docid/3c2b3f844.html>; ՄԱԿ ՓԳՀ, Փախստականների կարգավիճակի մասին 1951թ. կոնվենցիա, Նախապատրաստական աշխատանքների վերլուծություն՝ դոկտոր Փոլ Ուելսի մեկնաբանությամբ, 1990թ., էջ 219. «Ուղղակիորեն գալով» տերմինը, իհարկե, վերաբերում է այն անձանց, ովքեր ուղղակիորեն եկել են իրենց ծագման երկրից կամ մի երկրից, որտեղ նրանց կյանքը կամ ազատությունը վտանգված է եղել, սակայն այն վերաբերում է նաև այն անձանց, ովքեր կարճ ժամանակով գտնվել են միջանկյալ երկրում՝ առանց այնտեղ ապաստան ստանալու»: Հասանելի է հետևյալ հղմամբ՝ <http://www.refworld.org/docid/53e1dd114.html>: Տես նաև Ռ-ն ընդդեմ Սաֆոյի, վերը՝ 16-րդ ծանոթագրություն, պարբ. 56. «Ամենակարևոր հարցը, որ ծագում է նախապատրաստական աշխատանքների դիտարկումից, այն է, որ համընդհանուր կերպով ընդունված էր, որ միայն այն փաստը, որ փախստականները կանգ են առել տարանցիկ երկրում, չպետք է նրանց զրկի այս հոդվածից օգտվելու հնարավորությունից», <http://www.refworld.org/docid/483d12222.html>: Տես Ռ-ն ընդդեմ Ջադդիի [2012թ.] Անգլիայի և Ուելսի Վերաքննիչ դատարան, Քր. 2565, պարբ. 16. «Որպեսզի Գոնվենցիան ուժ ունենա, անհրաժեշտ է չպատժել նրանց, ովքեր միայն տարանցմամբ են գտնվում երրորդ երկրում կամ տկն. Սաֆոյի դեպքում՝ այս երկրում: Բսկապես տարանցման մեջ գտնվող անձը, ինչպես օրինակ՝ Սաֆոն, չի կորցնում Գոնվենցիայով, հետևաբար և 31-րդ հոդվածով նախատեսված պաշտպանությունը», <https://bit.ly/36Ahw5n>; Ռ-ն և Քոշի Փոթջու Մատեստան և մյուսները, [2013թ.] Անգլիայի և Ուելսի Վերաքննիչ դատարան, Քր. 1372, Միացյալ Թագավորություն. Վերաքննիչ դատարան (Անգլիա և Ուելս), 30 հուլիսի 2013թ., պարբ. 17. «Հաշվի առնելով, որ մեղադրյալը չի կորցնում 31-րդ հոդվածով և [1999 թվականի ՄԹ Ապաստանի մասին ակտի] 31-րդ հոդվածով նախատեսված պաշտպանությունը, էթե նա իսկապես տարանցմամբ գալիս է մի երկրից, որտեղ նրա կյանքը կամ ազատությունը վտանգված է եղել, դեպի այլ երկիր, որտեղ նա մտադիր էր ապաստանի դիմում ներկայացնել, կախված գործի փաստերից՝ էթե նա առանց ձգձգման չի ներկայանում Միացյալ Թագավորության իշխանություններին այս երկրում կարճատև կանգառի ընթացքում դեպի այն պետություն ուղևորվելիս, որտեղ նա ցանկանում էր ապաստանի հայց ներկայացնել, պաշտպանությունը կարող է պահպանվել: Հասանելի է հետևյալ հղմամբ՝ http://www.refworld.org/cases.GBR_CA_CIV_5215e0214.html:

¹⁴ ՄԱԿ ՓԳՀ Ամփոփ եզրակացություններ 2001թ., տես վերը՝ 9-րդ ծանոթագրությունը, պարբ. 10(բ). «Պարտադիր չէ, որ փախստականները ուղղակիորեն գան տարածքից, որտեղ նրանց կյանքը կամ ազատությունը վտանգված է եղել»: ՄԱԿ ՓԳՀ Գործադիր կոմիտեի Եզրակացություն թիվ 15 (XXX) (1979թ.), պարբ. (ը)(iii). «Ապաստան հայցողի մտադրությունները այն երկրի վերաբերյալ, որտեղ նա ցանկանում է ապաստան խնդրել, պետք է հնարավորինս հաշվի առնվեն»: Հասանելի է հետևյալ հղմամբ՝ <http://www.unhcr.org/excom/exconc/3ae68c960/refugees-asylum-country.html>: Տես նաև Guy Goodwin-Gill, տես վերը՝ 8-րդ ծանոթագրությունը, էջ 217-218; տես Նյուման Չ. Ռ-ն ընդդեմ Աքսբրիջի հաշտարար դատարանի և մեկ ուրիշի, պարբ. 69. «Գոնվենցիան կենդանի գործիք է, որը փոփոխվում և զարգանում է ժամանակի ընթացքում, որպեսզի համապատասխան լինի և իմաստալից պաշտպանություն ապահովի փախստականների համար այնպիսի պայմաններում, որոնցում նրանք ներկայումս ապաստան են հայցում: Կեղծ փաստաթղթեր օգտագործելու անհրաժեշտությունից բացի,

կամ երկրներում անցկացրած ժամանակի տևողությունը կարող է կարևոր գործոն լինել «ուղղակիորեն գալով» տերմինի մեկնաբանության համար, խիստ ժամկետ չպետք է կիրառվի այլ երկրներով անցնելու կամ այլ երկրներում մնալու համար, քանի որ յուրաքանչյուր դեպք պետք է գնահատվի տվյալ կոնկրետ փաստերի և հանգամանքների համատեքստում: Հարկավոր է հաշվի առնել կարևոր գործոնները, երբ գնահատվում է, թե արդյոք երրորդ երկրով կամ երկրներով տարանցելը կամ երրորդ երկրում կամ երկրներում նախկինում մնալը համատեղելի է «ուղղակիորեն գալով» հասկացության հետ¹⁵: Ուշացման պատճառներ կարող են լինել գործակալների կամ անօրինական միգրացիայի կազմակերպիչների խորհուրդը կամ հարկադրանքը կամ ճանապարհը շարունակելու համար միջոցներ ձեռք բերելու անհրաժեշտությունը: Վերջապես, կոնկրետ երկիր հասնելու փախստականի մտադրությունը, օրինակ՝ ընտանիքի վերամիավորման նպատակով, նույնպես գործոն է, որը հարկավոր է հաշվի առնել: «Ուղղակիորեն գալով» արտահայտությունը չի ներառում այն իրավիճակները, երբ փախստականը պաշտպանություն է գտել կամ ժամանակավոր կամ մշտական բնակություն է հաստատել այլ երկրում¹⁶:

Անհապաղություն – *առանց ձգձգման*. Որպեսզի փախստականները 1951 թվականի Կոնվենցիայի 31-րդ հոդվածի 1-ին պարբերության համաձայն չենթարկվեն պատժի, նրանք պետք է ներկայանան իշխանություններին և դա անեն առանց ձգձգման: Երբ պետությունն ունի ապաստանի կամ փախստականների պաշտպանության գործող համակարգ, և՛ պետության, և՛ փախստականի շահերից է բխում, որ նա ներկայանա այնքան շուտ, որքան ողջամտորեն հնարավոր է,¹⁷ այն է՝ երկիր ժամանելուց հետո ողջամիտ ժամկետում¹⁸ կամ չարտոնված ներկայության դեպքում՝ հետապնդման հիմնավոր երկյուղ ծագելուց հետո ողջամիտ ժամկետում (այն է՝ տեղում */sur place/* փախստականի կարգավիճակի հայց)¹⁹:

մեկ այլ ընթացիկ իրականություն և առաջընթաց է 1951 թվականից ի վեր օդային ճանապարհորդությունների իսկապես հասանելի համաշխարհային ցանցի զարգացումը: Դրա արդյունքում կարելի է ընտրել այլ ապաստան, քան ծովային կամ ցամաքային ճանապարհով հասանելի առաջին ապահով տարածքը»: Հասանելի է հետևյալ հղմամբ՝ http://www.refworld.org/cases,GBR_HC_QB,3ae6b6b41c.html :

¹⁵ ՄԱԿ ՓԳՀ *Ամփոփ եզրակացություններ 2017թ.*, տես վերը՝ 9-րդ ծանոթագրությունը, պարբ. 9:

¹⁶ *Stu Guy Goodwin-Gill*, տես վերը՝ 8-րդ ծանոթագրությունը, էջ 218, պարբ. 4. «Նախագիծը մշակողները միայն մտադիր էին այնպես անել, որ պատժի դեմ անձեռնմխելիությունը չկիրառվի այն փախստականների նկատմամբ, որոնք ժամանակավոր կամ մշտական բնակություն են հաստատել մեկ այլ երկրում»:

¹⁷ *Ռ.-ն և Քոչի Փիթչու Մատեսան և մյուսները*, [2013] ԱՈՒՎԴ ՔԲ 1372, Միացյալ Թագավորություն. Վերաքննիչ դատարան (Անգլիա և Ուելս), 30 հուլիսի 2013թ., ԼՋ Լեվիտոն, պարբ. 21(iii), www.refworld.org/cases,GBR_CA_CIV,5215e0214.html:

¹⁸ *Ռ.-ն ընդդեմ Աքբրիջի հաշտարար դատարանի*, [1999] ԱՈՒՎԴ Վարչ. 765; [2001] Չ.Բ. 667, Միացյալ Թագավորություն. Բարձր դատարան (Անգլիա և Ուելս), 29 հուլիսի 1999թ., պարբ. 25, www.refworld.org/cases,GBR_HC_QB,3ae6b6b41c.html :

¹⁹ Հետապնդման երկյուղ կարող է ծագել դիմողի՝ իր ծագման երկրից հեռանալուց հետո դիմողի բացակայության ընթացքում ծագման երկրում առաջացած հանգամանքների պատճառով կամ ծագման երկրից հեռանալուց հետո դիմողի սեփական գործողությունների արդյունքում, ինչը դիմողին դարձնում է տեղում */sur place/* փախստական; տես ՄԱԿ ՓԳՀ Ձեռնարկ փախստականի կարգավիճակի որոշման ընթացակարգերի և չափանիշների վերաբերյալ, պարբ. 94-96 (*Փախստականի կարգավիճակի որոշման ընթացակարգերի և չափանիշների մասին ձեռնարկում և Փախստականների կարգավիճակի մասին 1951 թվականի կոնվենցիայով և դրա 1967 թվականի Արձանագրությամբ նախատեսված միջազգային պաշտպանության մասին ուղեցույցում*), 2019թ. ապրիլ, HCR/1P/4/ENG/REV. 4, www.refworld.org/docid/5cb474b27.html :

«Առանց ձգձգման» տերմինը չպետք է մեկնաբանվի որպես խիստ ժամանակային պահանջ: Այն ավելի լայն է, քան «անհապաղ»-ը և «հնարավորինս շուտ»-ը: Այն, թե արդյոք փախստականը ներկայացել է «առանց ձգձգման», փաստի և աստիճանի հարց է՝ կախված գործի հանգամանքներից²⁰, որոնք ներառում են ժամանելու ժամանակն ու ձևը, փախստականի համար հասկանալի լեզվով տեղեկատվության առկայությունը, պատկերացումն այն մասին, թե ինչպես, որտեղ և որ մարմնին նրանք պետք է ներկայանան, և իրավաբանական օգնություն ապահովելու ջանքերը²¹: Փախստականները կարող են նախ մուտք գործել պետություն, ընդ որում՝ թույլտվություն ունենալով կամ չունենալով, և հետո միայն դիմել համապատասխան մարմիններին միջազգային պաշտպանություն հայցելու նպատակով²²:

Յուրաքանչյուր դեպք պետք է գնահատվի իր փաստերի և հանգամանքների համատեքստում՝ հաշվի առնելով թյուրըմբռումները և տեղեկատվության պակասը միջազգային պաշտպանության առկայության և ապաստանի տրամադրման գործընթացի մասին, անօրինական միգրացիայի կազմակերպիչների կողմից տրված սխալ խորհուրդները, տրավման, լեզվական խնդիրները, անապահովության զգացումները, վստահության պակասը կամ վախը, հատկապես՝ փախստական լինելու փորձից բխող վստահության պակասն ու վախը, համապատասխան մարմինների հետ առնչվելու նախկին փորձը կամ այլ անձնական փաստեր և հանգամանքներ, ինչպես օրինակ՝ տարիքը, սեռը, բազմազանությունը և առողջական վիճակը²³: Համապատասխան մարմիններին առանց ձգձգման ներկայանալը և միջազգային պաշտպանության կարիքի մասին հայտնելը փախստականի կողմից ողջամտորեն առաջին իսկ հնարավորության դեպքում ներկայանալու ձևով բարեխիղճ վարքագծի դրսևորում է: Չնայած որոշ դեպքերում հիմնավոր է ակնկալել, որ փախստականները պետք է ներկայանան և միջազգային պաշտպանության կարիքի մասին հայտնեն ժամանելուց անմիջապես հետո կամ կարճ ժամանակ անց՝ առաջին պետական պաշտոնատար անձին հանդիպելիս, նոր ժամանած փախստականները կարող են վախենալ հավաքական վերադարձից և սահմանահատումը կամ մուտքի կետերը համարել ապաստանի հայց ներկայացնելու համար անապահով կամ ոչ նպատակահարմար վայրեր²⁴:

Պետությունները պետք է այնպես անեն, որ բոլոր համապատասխան պետական պաշտոնատար անձինք, այդ թվում՝ ներգաղթային ծառայության աշխատակիցները և սահմանապահները, որոնք, տրամաբանորեն ակնկալվում է, որ կարող են առնչվել փախստականների հետ, հստակ հրահանգներ ունենան այն մասին, թե ինչպես վարվել այն դեպքերում, որոնք կարող են գտնվել համապատասխան միջազգային

²⁰ HR-2014-01323-A, Գործ թիվ 2014/220, 24 հունիսի 2014թ. (Նորվեգիայի Գերագույն դատարան): Ամփոփ եզրակացություններ. 1951 թվականի Կոնվենցիայի 31-րդ հոդված, 2003թ. հունիս, պարբ. 10(է), www.refworld.org/docid/470a33b20.html, («ՄԱԿ ՓԳՀ 2003թ. ամփոփ եզրակացություններ») պարբ. 10(զ):

²¹ ՄԱԿ ՓԳՀ 2003թ. ամփոփ եզրակացություններ, վերը՝ 20-րդ ծանոթագրություն, պարբ. 10(զ):

²² Ռ.-ն ընդդեմ Աքքրիջի հաշտարար դատարանի, [1999] ԱՌԼԴՎ Վարչ. 765; [2001] Չ.Բ. 667, Միացյալ Թագավորություն. Բարձր դատարան (Անգլիա և Ուելս), 29 հուլիսի 1999թ., պարբ. 61, www.refworld.org/cases_GBR_HC_QB_3ae6b6b41c.html : Ռ.-ն ընդդեմ Սսֆոյի, [2008] ՄԹԼՊ 31, Միացյալ Թագավորություն. Լորդերի պալատ (Դատական հանձնաժողով), 21 մայիսի 2008թ., պարբ. 16, www.refworld.org/cases_GBR_HL_4835401f2.html :

²³ Պետության Կենտրոնական շրջանային դատարան, 7.Բ.VIII.20.776/2013/34 (11 սեպտեմբերի և 3 դեկտեմբերի 2013թ.), հաշվի առնելով, որ հաճախ մաքսանենգներն են որոշում ժամանման ժամանակն ու ձևը:

²⁴ HR-2014-01323-A, Գործ թիվ 2014/220, 24 հունիսի 2014թ. (Նորվեգիայի Գերագույն դատարան), պարբ. 22, որը հասանելի է հետևյալ հղմամբ՝ http://www.refworld.org/cases_NOR_SC_5653395f4.html:

փաստաթղթերի գործողության շրջանակում: Դա նշանակում է, որ նրանք պետք է դեպի ապաստանի հարցերով զբաղվող համապատասխան մարմինները ուղղորդեն յուրաքանչյուր անձի, ով միջազգային պաշտպանություն է հայցում²⁵: Սա հատկապես կարևոր է հատուկ կարիքներ ունեցող անձանց պարագայում, որոնց թվում կարող են լինել վտանգի տակ գտնվող կանայք, թրաֆիքինգից և/կամ սեռական շահագործումից կամ խոշտանգումից կամ վատ վերաբերմունքի այլ ձևերից տուժած և միջազգային պաշտպանություն հայցող երեխաներ, հատկապես երբ նրանք առանց ուղեկցության կամ ընտանիքից բաժանված են²⁶: Բացի այդ, պետությունները պետք է այնպես անեն, որ միջազգային պաշտպանություն հայցող անձինք ունենան իրենց համար հասկանալի լեզվով համապատասխան տեղեկատվության հասանելիություն և իրավասու մարմինն պաշտոնական ապաստանի հայց ներկայացնելու, ինչպես նաև ՄԱԿ ՓԳՀ-ի հետ կապվելու հնարավորություն²⁷:

²⁵ ԳործԿում-ի Եզրակացություն թիվ 8 (XXVIII), 1977թ., պարբ. (ե)(թ), ԳործԿում-ի Եզրակացություն թիվ 81 (XLVIII), 1997թ., պարբ. (ը); ԳործԿում-ի Եզրակացություն թիվ 82 (XLVIII), 1997թ., պարբ. (դ)(ii) և (iii); ԳործԿում-ի Եզրակացություն թիվ 85 (XLIX), 1998թ., պարբ. (ձ): Տես նաև ՄԱԿ Գլխավոր ասամբլեա, Առաջարկվող սկզբունքներ և ուղեցույց կանոններ միջազգային սահմանին մարդու իրավունքների մասին. Խորհրդատվորդի փաստաթուղթ, 23 հուլիսի 2014թ., A/69/CRP. 1, Ուղեցույց 7, պարբ. 5, www.refworld.org/docid/54b8f58b4.html: Տես նաև *Պաշտպանության ընդդեմ Բոլիվիայի Բազմազգ Հանրապետության*, Մարդու իրավունքների միջամերիկյան դատարան (ՄԻՄԱԴ), 25 նոյեմբերի 2013թ., որը հասանելի է հետևյալ հղմամբ՝ www.refworld.org/cases,IACRTHR,52c53b154.html; Հոդված 6(1) (3-րդ պարբերություն), ԵՍ Ապաստանի ընթացակարգերի մասին դիրեկտիվ (վերանայված):

²⁶ *Խորհրդատվական կարծիք OC-21/14, «Միգրացիայի համատեքստում գտնվող և/կամ միջազգային պաշտպանության կարիք ունեցող երեխաների իրավունքներն ու երաշխիքները»*, OC-21/14, Մարդու իրավունքների միջամերիկյան դատարան (ՄԻՄԱԴ), 19 օգոստոսի 2014թ., պարբ. 83, www.refworld.org/cases,IACRTHR,54129c854.html: Կանանց դեմ խտրականության վերացման ՄԱԿ հանձնաժողով (ԿԴԽՎՀ), *Ընդհանուր հանձնարարական թիվ 32 փախստականի կարգավիճակի, ապաստանի, քաղաքացիության սեռին առնչվող հայեցակերպերի և կանանց ապաքաղաքացիության մասին*, 5 նոյեմբերի 2014թ., CEDAW/C/GC/32, պարբ. 44, www.refworld.org/docid/54620fb54.html : Բոլոր միգրանտ աշխատողների և նրանց ընտանիքի անդամների իրավունքների պաշտպանության ՄԱԿ հանձնաժողով (ՄԱՀ), *Բոլոր միգրանտ աշխատողների և նրանց ընտանիքի անդամների իրավունքների պաշտպանության ՄԱԿ հանձնաժողովի Համատեղ ընդհանուր մեկնաբանություն թիվ 3 (2017) և Երեխայի իրավունքների հանձնաժողովի թիվ 22 (2017) մեկնաբանություն միջազգային միգրացիայի համատեքստում երեխաների մարդու իրավունքներին առնչվող ընդհանուր սկզբունքների մասին*, 16 նոյեմբերի 2017թ., CMW/C/GC/3-CRC/C/GC/22, պարբ. 32(ը), www.refworld.org/docid/5a1293a24.html : Տես նաև՝ ԵՍ Ընդունելության պայմանների մասին դիրեկտիվի 21-րդ հոդված (վերանայված); ՄԱԿ ՓԳՀ, *10 կետից բաղկացած գործողությունների ծրագիր, 2016թ. Թարմացում, Գլուխ 5. Տեղեկատվության հավաքագրման և ուղղորդման մեխանիզմներ*, 2016թ. դեկտեմբեր, www.refworld.org/docid/5804e0f44.html :

²⁷ 1951 թվականի Կոնվենցիայի 35-րդ հոդվածի 1-ին մասը պահանջում է, որ մասնակից պետությունները համագործակցեն ՄԱԿ ՓԳՀ-ի հետ իրենց գործառնությունների իրականացման հարցում: Միաժամանակ, իր մանդատի և 1951 թվականի Կոնվենցիայի 35-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն, ՄԱԿ ՓԳՀ-ին պետք է տրվի միջազգային պաշտպանություն հայցող անձանց հետ կապվելու և այցելելու հնարավորություն՝ նրանց բարօրությունը գնահատելու և վերահսկելու, ինչպես նաև անհրաժեշտության դեպքում աջակցություն տրամադրելու նպատակով, տես՝ ԳործԿում-ի Եզրակացություն թիվ 22 (XXXII), 1981թ., պարբ. III; ԳործԿում-ի Եզրակացություն թիվ 33 (XXXV), 1984թ., պարբ. (ը); ԳործԿում-ի Եզրակացություն թիվ 72 (XLIV), 1993թ., պարբ. (բ); ԳործԿում-ի Եզրակացություն թիվ 73 (XLIV), 1993թ., պարբ. (բ) (iii); ԳործԿում-ի Եզրակացություն թիվ 79 (XLVII), 1996թ., պարբ. (յ); ՄԱԿ Մարդու իրավունքների հանձնաժողով (ՄԻՀ), *Ընդհանուր մեկնաբանություն թիվ 35, պարբ. 58*, 16 դեկտեմբերի 2014թ., CCPR/C/GC/35, պարբ. 18, www.refworld.org/docid/553e0f984.html :

Երբ պետությունները ժամկետներ են սահմանում, որոնցում փախստականները պետք է ներկայանան իշխանություններին և ապաստան հայցեն, այդ ժամկետները չպահպանելը անպայմանորեն չի զրկում նման փախստականներին 31-րդ հոդվածի 1-ին պարբերությամբ նախատեսված պատժի չենթարկվելու իրավունքից՝ համապատասխան մարմիններին առանց ձգձգման չներկայանալու հիմքով:

Հիմնավոր պատճառ – ներկայացնում են ապօրինի մուտքի կամ ներկայության հիմնավոր պատճառ. Փախստականները պետք է ապօրինի մուտքի կամ ներկայության համար հիմնավոր պատճառ կամ ծանրակշիռ հիմնավորումներ ներկայացնեն²⁸: Փախստականի ողջամիտ համոզմունքն այն մասին, որ մուտքի կամ ներկայության անկանոն միջոցներին դիմելը անհրաժեշտ է միջազգային պաշտպանություն հայցելու նպատակով ապաստանի երկիր արագ մուտք գործելու և այնտեղ մնալու համար, հիմնականում համարվում է «հիմնավոր պատճառ» 31-րդ հոդվածի 1-ին պարբերության իմաստով²⁹: 1951 թվականի Կոնվենցիայի 31-րդ հոդվածի 1-ին պարբերությունը չի պահանջում, որ անկանոն մուտքը կամ ներկայությունը անհրաժեշտ լինեն միջազգային պաշտպանություն հայցելու համար: Իրականում փախստականները հիմնականում ունենում են հիմնավոր պատճառ՝ հաշվի առնելով այն փաստը, որ շատերը բախվում են հյուրընկալող երկիր կանոնավոր մուտքի կամ այնտեղ մնալու հետ կապված փաստացի և իրավական ռիսկերի և խոչընդոտների հետ, որոնք արդյունքում ստիպում են նրանց դիմել անկանոն միջոցներին³⁰: Որպես այդպիսին, «հիմնավոր պատճառ»-ը կարող է բավարարվել, երբ անձը օգտագործում է կեղծ կամ կեղծիքի նշաններ պարունակող փաստաթղթեր կամ այլ կերպ շրջանցում է ներգաղթային կամ սահմանային վերահսկողության պահանջները և սահմանին առկա ֆիզիկական խոչընդոտները սահմանին մերժում ստանալու վախի պատճառով,³¹ ի վիճակի չէ ֆիզիկապես մուտք գործել մուտքի սահմանված կետ, չունի տեղեկություն կամ գիտելիք համապատասխան ընթացակարգերի մասին, գործում է անօրինական միգրացիայով կամ թրաֆիքինգով զբաղվողի ցուցումներով կամ ենթարկվել է տրավմայի³²: Նաև ընդունվել է, որ հետապնդման ենթարկվելու հիմնավոր երկյուղ ունենալը ինքնին կարող է անկանոն մուտք գործելու կամ մնալու «հիմնավոր պատճառ» լինել, երբ անձը գալիս է մի տարածքից, որտեղ նրա կյանքը կամ ազատությունը վտանգված էր, կամ որտեղ պաշտպանություն առկա չէ, հատկապես՝ եթե նա վախենում է վերադարձվելուց, այդ թվում՝ սահմանին մերժում ստանալու հետևանքով կամ վախենում է արտաքսումից՝ անկանոն ներկայության դեպքում³³:

²⁸1951 թվականի Կոնվենցիայի 31-րդ հոդվածի 1-ին պարբերության ֆրանսերեն բնօրինակ տեքստում հղում է կատարվում հետևյալին. ‘des raisons reconnues valables’:

²⁹Շվեյցարիայի Դաշնային վճարեկ դատարան (Bundesgericht, Kassationshof), 1999 թվականի մարտի 17-ի որոշում, որի մասին հաղորդվում է Ապաստան 2/99, 21, պարբ. 3-ում:

³⁰Ռ.-ն ընդդեմ Աքսրիջի հաշտարար դատարանի [1999] ԱՈՒԲՊ Վարչ 765; [2001] Չ.Բ. 667, Միացյալ Թագավորություն. Բարձր դատարան (Անգլիա և Ուելս), 29 հուլիսի 1999թ., պարբ. 26, www.refworld.org/cases,GBR_HC_QB,3ae6b6b41c.html : Ռ.-ն և Քոչի Փիթչու Մատեոսան և մյուսները, [2013] ԱՈՒՎԴ Քր 1372, Միացյալ Թագավորություն. Վերաքննիչ դատարան (Անգլիա և Ուելս), 30 հուլիսի 2013թ., պարբ. 20, www.refworld.org/cases,GBR_CA_CIV,5215e0214.html : Երկու դեպքում էլ հաստատվել է, որ հիմնավոր պատճառի դրույթը բավարարվել է, քանի որ «իսկական փախստականը մատնանշել է, որ ինքը ողջամիտ պատճառներով ճանապարհորդել է կեղծ փաստաթղթերով»:

³¹ՄԱԿ ՓԳՀ 2017թ. Անփոփ եզրակացություններ, տես վերը 9-րդ ծանոթագրությունը, պարբ. 18; Նիդերլանդների Գերագույն դատարան, 5 հուլիսի 2011թ., թիվ 09/02249, պարբ. 2.6.2:

³²Տես Guy Goodwin-Gill, տես վերը՝ 8-րդ ծանոթագրությունը, էջ 217:

³³ՄԱԿ ՓԳՀ 2003թ. Անփոփ եզրակացություններ, վերը՝ 20-րդ ծանոթագրություն, պարբ. 10(ե); Փախստականների և քաղաքացիություն չունեցող անձանց կարգավիճակի հարցերով լիազոր ներկայացուցիչների ՄԱԿ խորհրդածողով, Փախստականների և քաղաքացիություն չունեցող անձանց

Ուստի առաջարկվող փոփոխությամբ պետք է նաև ապահովվի, որ պատժի չենթարկելու դրույթի բաղադրիչ տարրերը մանրակրկիտ կերպով ուսումնասիրվեն, վերլուծվեն դեպք առ դեպք հիմունքներով և պատշաճ կերպով կիրառվեն համապատասխան պետական կառույցների կողմից (ոստիկանություն, դատախազություն, ազգային անվտանգության աշխատակիցներ, սահմանապահներ): Սա կերաշխավորի 1951 թվականի Կոնվենցիայի 31-րդ հոդվածի 1-ին պարբերության համաձայն դրանց իրականացումը:

Այս առումով օգտակար կլինի դիտարկել որոշ լրացուցիչ գործողություններ՝ առաջարկվող փոփոխության ընդունման հետ կապված, ինչպես օրինակ՝ (i) ուղղակիորեն սահմանել «Փախստականների և ապաստանի մասին» օրենքի 28-րդ հոդվածի 1-ին մասի ճշգրիտ իրականացման համար պատասխանատու համապատասխան պետական դերակատարների պարտականություն(ներ)ը, (ii) հաջորդիվ ընդունել պատժի չենթարկելու դրույթի բաղադրիչ տարրերը մանրամասն սահմանող օրենսդրական ակտ, որպեսզի ապահովվի գործուն և արդյունավետ քննություն և գնահատում և (iii) զարգացնել համապատասխան պետական գերատեսչությունների նոր և փորձառու անձնակազմի կարողությունները փախստականների պաշտպանության, այդ թվում՝ պատժի չենթարկելու սկզբունքի վերաբերյալ:

Կարևոր է ընդգծել, որ ապաստան հայցելը համընդհանուր մարդու իրավունք է³⁴: Ապաստանի յուրաքանչյուր դիմում պետք է դիտարկվի ըստ էության՝ ապաստանի տրամադրման արդար, գործուն և արդյունավետ ընթացակարգերի արդյունքում: Այս իմաստով քրեական վարույթ սկսելը ապաստան հայցողների և փախստականների դեմ, որոնք մուտք են գործել կամ գտնվում են տվյալ երկրի տարածքում անկանոն կերպով, և որոնք չեն եկել ուղղակիորեն, առանց ձգձգման չեն ներկայացել իշխանություններին կամ անկանոն մուտքի կամ ներկայության հիմնավոր պատճառ չեն ներկայացրել, չպետք է խոչընդոտի նման անձանց համար ապաստանի

կարգավիճակի հարցերով լիազոր ներկայացուցիչների խորհրդաժողով. Տասնչորսերորդ հանդիպման ամփոփ արձանագրություն, 22 նոյեմբերի 1951թ., A/CONF.2/SR.14, պրն. Հորի ելույթի խոսքը (Միացյալ Թագավորություն), էջ 7, www.refworld.org/docid/3ae68cdb0.html :

³⁴ Ապաստան հայցելու և ապաստանից օգտվելու իրավունքը ամրագրված է տարբեր տարածաշրջանային իրավական փաստաթղթերում և մասամբ իրականացվում է պետությունների փախստականներին 1951 թվականի Կոնվենցիայի և դրա 1967 թվականի Արձանագրության համաձայն միջազգային պաշտպանություն տրամադրելու պարտավորությունների միջոցով, ինչպես նաև փախստականներին առնչվող տարածաշրջանային իրավական փաստաթղթերով: Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի 14-րդ հոդվածը սահմանում է, որ «յուրաքանչյուր ոք հետապնդումից այլ երկրներում ապաստան փնտրելու և այդ ապաստանից օգտվելու իրավունք ունի»: Ամերիկյան պետությունների կազմակերպություն, Մարդու իրավունքների և պարտականությունների ամերիկյան հռչակագիր, 2 մայիսի 1948թ., Հոդված XXVII, www.unhcr.org/refworld/docid/3ae6b3710.html, որը վկայակոչում է ապաստան հայցելու և ստանալու իրավունքը: Ամերիկյան պետությունների կազմակերպություն, Մարդու իրավունքների ամերիկյան կոնվենցիա, «Սան Խոսեի դաշնագիր», Կոստա Ռիկա, 22 նոյեմբերի 1969թ., Հոդված 22(7), www.unhcr.org/refworld/docid/3ae6b36510.html , որտեղ վկայակոչվում է ապաստան հայցելու և ստանալու իրավունքը: Մարդու և ժողովուրդների իրավունքների աֆրիկյան խարտիա («Բանջուրի խարտիա»), 27 հունիսի 1981թ., CAB/LEG/67/3 վերանայված 5, 21 I.L.M. 58 (1982թ.), Հոդված 12(3), www.refworld.org/docid/3ae6b3630.html , որտեղ վկայակոչվում է ապաստան հայցելու և ստանալու իրավունքը: Եվրոպական միություն, Հիմնարար իրավունքների մասին Եվրոպական միության խարտիա, 26 հոկտեմբերի 2012թ., 2012/C 326/02, Հոդված 18, www.refworld.org/docid/3ae6b3b70.html (Հիմնարար իրավունքների մասին ԵՄ խարտիա), որտեղ վկայակոչվում է ապաստանի իրավունքը, որը պետք է երաշխավորվի՝ հարգելով 1951 թվականի Կոնվենցիան և ԵՄ իրավունքը:

ընթացակարգերի հասանելիությունը և նրանց ապաստանի հայցի ըստ էության քննարկումը:

Ավելին, ՄԱԿ ՓԳՀ-ն խրախուսում է Հայաստանի իշխանություններին նաև հաշվի առնել Կամայական կալանավորման հարցերով աշխատանքային խմբի տեսակետները, համաձայն որոնց՝ երկիր անկանոն մուտք գործելը քրեականացնելը գերազանցում է պետությունների՝ ապօրինի ներգաղթը վերահսկելու և կանոնակարգելու օրինական շահի սահմանները և հանգեցնում է անտեղի կալանավորման³⁵: Ուստի փախստականների անկանոն մուտքը կամ ներկայությունը չպետք է համարվի քրեական հանցանք:

ՄԱԿ ՓԳՀ-ն նաև ցանկանում է առաջարկել, որ «Փախստականների և ապաստանի մասին» օրենքի 28-րդ հոդվածը վերանվանվի, որպեսզի արտացոլի և՛ անկանոն մուտքի, և՛ Հայաստանում անկանոն ներկայության հարցը, ինչպես նաև համապատասխանի իրավական դրույթի առարկային և շրջանակին:

Հետևաբար, վերոնշյալի լույսի ներքո,

ՄԱԿ ՓԳՀ-ն առաջարկում է.

- Փոփոխել 28-րդ հոդվածի վերնագիրը հետևյալ կերպ՝ «Հայաստանի Հանրապետություն ապօրինի մուտք գործելը և ապօրինի ներկայությունը Հայաստանի Հանրապետությունում»:
- «Փախստականների և ապաստանի մասին Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծում ավելացնել նոր հոդված՝ հետևյալ հնարավոր ձևակերպմամբ.

«Հոդված 2. Սույն հոդվածի 1-ին մասում ամրագրված հասկացությունները սահմանվում են Կառավարության որոշմամբ»:

2. Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 329-րդ հոդվածի 3-րդ մասում առաջարկվող փոփոխությունները

Քրեական օրենսգրքի 329-րդ հոդվածի 3-րդ մասում առաջարկվող փոփոխությամբ սահմանվում է.

«Սույն հոդվածի գործողությունը չի տարածվում «Փախստականների և ապաստանի մասին» օրենքի 28-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված անձանց նկատմամբ»:

³⁵ ՄԱԿ Մարդու իրավունքների խորհուրդ, *Մարդու բոլոր իրավունքների, քաղաքացիական, քաղաքական, տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների, այդ թվում՝ զարգացման իրավունքի աջակցություն և պաշտպանություն. Կամայական կալանավորման հարցերով աշխատանքային խմբի զեկույց*, 10 հունվարի 2008թ., A/HRC/7/4, պարբ. 53, www.refworld.org/docid/47b306d22.html : ՄԱԿ Մարդու իրավունքների խորհուրդ, *Կամայական կալանավորման հարցերով աշխատանքային խմբի զեկույց*, 15 հունվարի 2010թ., A/HRC/13/30, պարբ. 58, www.refworld.org/docid/5a9049754.html : ՄԱԿ Կամայական կալանավորման հարցերով աշխատանքային խումբ, *Վերանայված քննարկում թիվ 5՝ միգրանտների ազատագրված մասին*, 7 փետրվարի 2018թ., պարբ. 10, www.refworld.org/docid/5a903b514.html :

ՄԱԿ ՓԳՀ-ն ողջունում է, որ վկայակոչելով «Փախստականների և ապաստանի մասին» օրենքը՝ այս փոփոխությունը ներդաշնակեցնում է երկու տարբեր ազգային օրենսդրական ակտերում, մասնավորապես՝ քրեական օրենսգրքում և «Փախստականների և ապաստանի մասին» օրենքում ամրագրված՝ պատժի չենթարկելու սկզբունքի սահմանումը:

Պատժի չենթարկելու մասին նոր դրույթի ներդաշնակեցված կիրառությունը ապահովելու նպատակով ՄԱԿ ՓԳՀ-ն առաջարկում է նաև փոփոխություններ կատարել *քրեական օրենսգրքի* 325-րդ հոդվածում՝ «Փախստականների և ապաստանի մասին» օրենքի 28-րդ հոդվածը վկայակոչող դրույթի միջոցով, որպեսզի ներառվեն փախստականների և ապաստան հայցողների կողմից անբավարար, կեղծ կամ կեղծիքի նշաններ պարունակող փաստաթղթեր օգտագործելու միջոցով անկանոն մուտքի հանգամանքները³⁶:

ՄԱԿ ՓԳՀ-ն առաջարկում է փոփոխել քրեական օրենսգրքի 325-րդ հոդվածը՝ հետևյալ հղումը ներմուծելով.

«Սույն հոդվածի գործողությունը չի տարածվում «Փախստականների և ապաստանի մասին» օրենքի 28-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված անձանց նկատմամբ, եթե նրանք Հայաստանի Հանրապետություն մուտք գործելու համար ստիպված են եղել օգտագործել անբավարար, կեղծ կամ կեղծիքի նշաններ պարունակող փաստաթղթեր»:

Ամփոփում

ՄԱԿ ՓԳՀ-ն ողջունում է մասնակցային մոտեցումը և համապարփակ խորհրդակցային գործընթացը այս փոփոխությունների նախապատրաստման հարցում և շարունակում է մնալ հասանելի հետագա քննարկումների համար, ինչպես նաև պատրաստ է անհրաժեշտության դեպքում հետագայում ևս կիսվել իր մասնագիտական փորձով և տրամադրել աջակցություն:

ՄԱԿ ՓԳՀ, 12 նոյեմբերի 2019թ.

³⁶ Գործադիր Կոմիտեի Եզրակացություն թիվ 58 (XL) 1989, պարբ. (ա)՝ <http://www.refworld.org/docid/5a2ead6b4.html>: Գործադիր կոմիտեի եզրակացություններն ընդունվել են պետությունների միասնական համաձայնությամբ, որոնք Գործադիր կոմիտեի անդամ են, հետևաբար կարելի է համարել, որ դրանք արտացոլում են փախստականների պաշտպանությանն առնչվող իրավական չափորոշիչների նրանց ըմբռնումը: Ներկայումս 102 պետություններ անդամակցում են Գործադիր կոմիտեին: Հայաստանը Գործադիր կոմիտեի անդամ է և պահպանելու է իր անդամակցությունը 2018 թվականի հոկտեմբերից մինչև 2019 թվականի հոկտեմբերն ընկած ժամանակահատվածում: